**298.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** վրա, որը գտնվելիս է եղել գերեզմանատան մեջ.*

Այս տապան Քաչալ . . . է, որդի Ապրէսին մեծի . . պապին Խոջորոդի . . . իմոյ պարոն Ս.նին թվ. :Ռ: (1551):

*Հրատ. Բարխուդարեանց, 222։*

**299.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** վրա, նույն տեղում.*

Թվ. :Ռ . . .ու փոխեցաւ առ Աստուած. այս է տապան Շահփարին . . Նոյեմզարին:

*Հրատ. Բարխուդարեանց, 222։*

## 21. ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ

*Այժմ մենակյաց այս վանքը գտնվում է Ջրաբերդի մոտ, Թարթառի վտակ Թըրղի գետակի ափին։ Հնում վանքի մոտ եղել է Խոխոմաշեն անունով գյուղ, որն այժմ անմարդաբնակ է։ Մոտակայքում Տոնաշեն և Մեծ շեն գյուղերն են։*

*Վանքը բաղկացած է մի եկեղեցուց միայն, որը չորս սյուների վրա հանգչող գմբեթավոր շենք է. շինված է տեղական սպիտակավուն կրաքարից, սրբատաշ է։ Բակում կան մի քանի սենյակներ ու խուցեր։ Եղել է Աղվանից հակաթոռ կաթողիկոսների նստոցը, որոնցից մեկի՝ Սիմեոնի կողմից էլ շինվել է 1691 թվականին։ Վանքի ճարտարապետն է Ուստա Սարգիսը։*

*Այս վանքից ժողովածուում տեղ գտած 13 արձանագրություններից միայն չորսն են հրատարակված։*

**300.** ***ԵԿԵՂԵՑՈՒ** արևմտյան մուտքի կիսակամար ճակատաքարի վրա, արտաքուստ, 10 տող.*



Ի :ՌՃԽ: (1691) ԹՎ ԻՍ, Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՇԱՀ ՍՈՒ[Լ]ԷՅՄԱՆԻՆ ՄԵԾԻ ԱՐՔԱՅԻՆ ՊԱՐՍԻՑ ԵՍ ՍԻՄԵՕՆ ՇՆՈՐՀԻԻՆ ԱՅ Կ[Ա]Թ[Ո]Ղ[Ի]ԿՈՍ Ա[Ղ]ՈՒԱՆԻՑ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԸՆԴ[ՀԱՐԱԶԱՏ ԵՂԲԱՐԲ ԻՄՈՎ ԻԳՆԱՏԻՈՍԻ Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]ՏԻՆ.ՈՐ ԵՄՔ ՈՐԴԻՔ ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ[Ի]Ն[ՄԵԾՇԻՆԵՑՈՑ: ՅԱՂՕԹՍ ՅԻՇԵՑԷՔ[ ՈՐԴԻՔ ՆՈՐ ՍԻՕՆԻ Ի ՄՏԱՆԵԼՆ[ ԵՒ ՅԵԼԱՆԵԼՆ ԴՐԱՆՍ Տ[Է]ՐՈՒՆԻ. ԱՄԷՆ:

*Հրատ. Ջալալեանց, I, 178։ Բարխուդարեանց, 232։*
Լուսանկ. 78

**301.** ***ԵԿԵՂԵՑՈՒ** բեմի բարձրության ճակատին, 6 տող.*



ԿԵՐՏԵՑԱՒ ԱՅՍ ՅԱՐԿ ՆՈՒԻՐԱՆԱՑ ՏՈՒՆ ԱՅ. ԵՒ ՏԱՃԱՐ ՓԱՌԱՑ ՆՈՐՈՑ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԱՑ, ԶՈՐ ՏՐ. ՅՍ. ՄԵԶ ԱՒԱՆԴԵԱՑ: ՇԻ[ՆԵՑԱՒ ՅԵՐԿՈՒՑ ՀԱՐԱԶԱՏԱՑ

ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԻԳՆԱՏԻՈՍԻ ՐԱԲՈՒՆԵԱՑ ԵՒ ԱՅԼ ՑՈՔՈՒՆՑ ԱՇԽԱՏՈՂԱՑ ԳՐԵԼՈՑ Ի ԴՊՐՈՒԹԻ. ԿԵՆԱՑ. Ի ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՀԱԶԱՐ ՀԱՐԻՒՐ ԵՒ ՉՈՐՍ ՏԱՍՆԻ (1691): ԱՒԱՐՏԵՑԱՒ ՍՈՅՆ ԵԿԵՂԵ-ՑԻՒՔՍ Ի ՓԱՌՍ ԱՆՃԱՌ ՏՐՆ ՅՍԻ. ՈՐՔ ԱՂՕԹԷՔ ԵՒ ԵՐԿԸՐՊԱԳԷՔ ՅՈՒՂԻՂ ՄՏՕՔ ՅԱՅՍ ՆԿԱՏԷՔ|, ԱՂԵՐՍԱՆՕՔ ՉՏՆ. ՅԻՇԵՑԷՔ, ԵՒ ՅԱՆՑԱՆԱՑ ՄԵՐՈՑ ԹՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵՑԷՔ, ԵՒՍ ԱՌԱՒԵԼ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ| ՄԱՐՄՆԱՒՈՐԱՑ ՍԱՐ-ԳԻՍ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՒ ՄՕՐ ՄԵՐՈՒՄԱՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԱՇԽԱՏԱՒՈՐԱՑ Ի ՍՄԱ.
ԱՄԷՆ:

*Հրատ. Ջալալեանց, I, 178—179, Բարխուդարեանց, 232 (Թերիվերչից)։*

**302. ԵԿԵՂԵՑՈՒ** *հյուսիսային պատի արևելյան մույթի վրա, երեսով հարավ, ներքուստ, 3 տող.*



ՇԻՆՕՂ ԵՒ ՎԱՐՊԵՏ| ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՈՒՍՏԱ| ՍԱՐԳԻՍՆ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդներին։*

*Հրատ. Ջալալեանց, I, 179։*

**303. ԵԿԵՂԵՑՈՒ** *հյուսիսային պատին, նախորդի մոտ.*

Աշխատութեամբ աւարտ նաասք արդեամբ և փոյթիւք Աստուածասիրաց և ողորմա-ծուց, ի վերայ պատուական նշխարաց սրբոյ Դանիէլի մարգարէին և երից սրբոց մանկանց, որք աստ եղեալ կան և առնեն մեծամեծ հրաշագործութիւնս. աստանօր շինեցաւ սա ի փրկութիւն մեզ և ի թողութիւն բազմաց մեղաց մե-րոց հոգւոր և մարմնաւոր ծնողաց մերոց. այլ ամենայն աշխատողաց յիշեցէք
ի մաքրափայլ յաղաւթս ձեր զմեզ և զմիաբանքս ուխտիս:

Ծանոթ. *Այս արձանագրությունն ունի միայն Ջալալյանցը. մենք ես տեղում չտեսանք։ Գրված պիտի լինի նախորդների ժամանակ։*

*Հրատ. Ջալալեանց, I, 179։*

**304. ԵԿԵՂԵՑՈՒ** *հարավ-արևելյան սյան արևմտյան երեսին, 11 տող.*



ՇԻՆԵՑԱՒ ԵՐԿՈՒ|ՍԻՒՆՍ ԵՒ ԹԱԽԹԱ|ՓՈՒՇՆ . . . Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՌՈՒՍԱՑ ԱՂԻՔ|ՍԱՆԴՐԱՑ. Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՆ ՄԱՏԹԷՈՍԻ. ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆԲ| ԺՈՂՈՎՐԴՈՑ. ՋԵՌԱՄԲ ԿՈՒՍԱՊԱՏՈՒ ԵՍԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ. :ՌՅԹ. 1860|: ՅԻՇՈՂՔԴ ՅԻՇԵԱԼ ԼԻ-ՑԻՆ ԱՌԱ|ՋԻ ԱՆՄԱՀԴԱՌԻՆ ԱՑ. ԵՒ ԵՐՋԱ|ՆԻԿ ՍՐԲՈՑՆ ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ:

305. ԵԿԵՂԵՑՈՒ հարավ-արևելյան սյան արևմտյան երեսին, նախորդից ներքև, 4 տող.

ՎԵՐՍՏԻՆՆՈՐՈԳԵՑԻԵՐԿՈ
ՍԻՒՆՍՏՃԱՐԻՍԵՍԱՅԻ
ՎԱՐԴԱՊԵՏՍՈՎՈՔՀԱ
ՆԴԻՊԵՍՑԻ

ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԻ ԵՐԿՈՒ| ՍԻՒՆՍ Տ[Ա]ՃԱՐԻՍ ԵՍԱՑԻ| ՎԱՐԴԱՊԵՏՍ. ՈՎ ՈՔ ՀԱ|ՆԴԻՊԵՍՑԻ . . .

Ծանոթ. Շարունակությունն չանի: Ժամանակակից է նախորդին:

306. ԽԱՉՔԱՐ, փոքր, եկեղեցու շինության ժամանակ ագուցված է հյուսիս-արևելյան ավանդատան հյուսիսային պատի խորշի մեջ՝ գլխիվայր, վրան 2 տող.

ԹՌ- | Ի
Մ | ՂՄ

Թ[Վ]. :ՌԻ: (1571).| Մ ԼՄ:

Ծանոթ. Վերջին բառը մի՝ անուն պետք է լինի, հավանաբար Մելքում:

307. ԽԱՉՔԱՐ, փոքր, ագուցված նախորդի մոտ, գլխիվայր, վրան 3 տող.

ՍԱՐԳԻՍՎԵԼԻՋ
ԱՆ
ՋԻՋԻՆ

ՍԱՐԳԻՍ. ՎԵԼԻՋԱՆԻՆ, ՋԻՋԻՆ:

Ծանոթ. Վերջին անունը կարող է և ՋԻՋԻՆ վերծանվել: Ժամանակակից է նախորդին:

308. ԽԱՉՔԱՐ, փոքր. եկեղեցու շինության ժամանակ ագուցված է հարավ-արևելյան ավանդատան հարավային խորշի մեջ, կողքանց, վրան 6 տող.

ՍԲ ԽՉՍ ՇՀ
ՌՄ
ԻՆ
ՄԵԼՔՈՄԻՆ
ԹՎՌԿ
Թ

ՍԲ. Խ[Ա]ՉՍ Շ[Ա]ՀՌՈՒՄ|ԻՆ,|ՄԵԼՔՈՒՄԻՆ.| Թ[Վ].:ՌԿԹ: (1620):

309. ԽԱՉՔԱՐ, փոքր, ագուցված է եկեղեցու հյուսիսային պատի արևելյան խորշի մեջ, ներքուստ, վրան 3 տող.

ՍԲԽԱՉՍ
ՎԱՐԴՈՒՄ
ԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ| ՎԱՐԴՈՒՄ|ԻՆ:

Ծանոթ. Ըստ ոճի XVII դար:

310. ԽԱՉՔԱՐ, փոքր, ագուցված է նախորդի մոտ, վրան 4 տող.

ՍԲ | ԽՉՍ
ՀՌՈ | ԻՄՍ
Ս ԻՐԻՆ
ՈՐԴՈՑ

ՍԲ. Խ[Ա]ՉՍ| ՀՌՈՒՍԻՄԻՆ, ԻԻՐ ՈՐԴՈՑ:

Ծանոթ. Տառերի տեղադրությունը խառն է:

**311. ԲԱԿՈՒՄ**, *անտեսական մեծ շենքի պատի մեջ ագուցված մի քարի վրա (շենքը եկեղեցու հարավումն է), 4 տող.*



ԵՍ ԿԱԲՐԻԷԼՍ ԿՐԵՑԻ. :ՌՃՂԴ: (1745) Թ·Վ.⌜ԻՆ⌝, ՈՐ ՆԱՏԻՐ ՇԱՀՆ ԱՄԱՆ⌜Ա⌝ԿԱՒՆ ԳՆԱՑ:

Ծանոթ. *Հավանաբար գրչի սխալմունք է. «ամանակաւն» դուցե «ժամանակաւն» (խմբ.),*

Լուսանկ 79.

**312. ԲԱԿՈՒՄ**, *տնտեսական շենքի անկյունաքարի վրա, փակագիր 2 տող.*



Ծանոթ. *Երկրորդ տողում հավանաբար ԴԱՒԻԹ անունն է։*

Լուսանկ. 80

## 22. ԴԱՍՏԱԳԻՐ—ԴԱՍՏԱԳՅՈՒՂ—ԴԱՍՏԱԿԵՐՏ

*Այս գյուղում եղել է եկեղեցի, որն ունեցել է նաև գավիթ, իսկ շրջապատում՝ գերեզմանատուն։ Բարխուդարյանցի այցելած ժամանակ շենքերի միայն պատերն են կանգուն եղել, այժմ դրանք էլ չկան։ Շենքերի քարերը և տապանաքարերը գյուղացիք օգտագործել են իրենց տների պատերի մեջ, ուր և մենք տեսանք երկու խաչքարերի մասեր՝ արձանագրությունների մնացորդներով։ Մյուս արձանագրություններն առնում ենք Բարխուդարյանցից։*

*Կաղանկատվացին գյուղը հիշատակում է Դաստակերտ անունով*[1]*։*

**313. ԽԱՉՔԱՐԻ** *մաս, դրված մի տան պատուհանի կողին, վրան 3 տող.*



. . . ԿԱՆԳՆԵՑԻ Խ⌊Ա⌋ՉՍ| ԽԱԹՈՒՆԱ ԵՒ ՄԱ|ՍԽԱԹՈՒՆԱ:

Ծանոթ. *Այս և հաջորդ արձանագրությունը միացված են Բարխուդարյանցի մոտ, բայց դրանք տարբեր են։*

*Հրատ. Բարխուդարեանց, 233։*

**314. ԽԱՉՔԱՐԻ** *մաս, դրված մի այլ տան պատի մեջ, վրան 4 տող.*



:Չ⌝ԺԲ: (1263) ԷՐ Թ⌜Ի⌝Վ.Ն| ԵՍ ՄՈՍԷՍ ԷՐԷՑ. ՈՐ ԿԱ|ՆԳՆԵՑԻ ՍԲ. ՆՇԱՆ⌜Ս| . . . . . :

Ծանոթ. *Հարյուրավորը հավանաբար ենք վերականգնում։ Տե՛ս նախորդի ծանոթությունը։*

**315. ԵԿԵՂԵՑՈՒ** *հարավային ավանդատան ճակատին եղել է.*

Թւ. :ՉԻԵ: (1276), ի թագաւորութեան Ապաղէին, յամի տէրութեան Իւանէի, ի հայրապետութեան տէր Ստեփանոսի. ես տէր Սուքիասեանց ցեղէն տէր Ներսէս հիմնադրի տկար ոգով շինեցի զեկեղեցիս յիշատակ մեզ և մերոց. յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ:

*Հրատ. Բարխուդարեանց, 233։*

---

[1] Մ. Կաղանկատուացի, *380*։